ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«06» նոյեմբերի 2012 թ. N 86

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 18-ի N1304-Ա որոշումը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունքի, Ջանֆիդայի, Լուկաշինի, Ամասիայի և Ջրառատի գյուղական համայնքների գյուղապետարանում ընդունման-հանձնման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Հ. Պետրոսյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 15 աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հանձնաժողովին (Հ. Պետրոսյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունքի, Ջանֆիդայի, Լուկաշինի, Ամասիայի և Ջրառատի գյուղապետարանների աշխատակազմերի համապատասխան մասնագետներին (համաձայնությամբ):
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ. Կարապետյանին:
6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2012 թվականի նոյեմբերի 26-ի
N 86 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Հ. Պետրոսյան — -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄ տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ.

Անդամներ՝

Հ. Հարությունյան — -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ.

Յու. Մանվելյան — -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբական բաժնի պետ.

Հ. Ալեքսանյան — -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ.

Ս. Խաչատրյան — -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ.

Հանձնող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունքի, Ջանֆիդայի, Լուկաշինի, Ամասիայի և Ջրառատի գյուղական համայնքների ղեկավարներ.

Ընդունող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունքի, Ջանֆիդայի, Լուկաշինի, Ամասիայի և Ջրառատի գյուղական համայնքների նորընտիր ղեկավարներ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ***Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***